Հարցաշար 2024 թ.
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
8–րդ դասարան - 120 րոպե
N 1-8
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ի՞նչ է կատարվում եկեղեցում Վերափոխման տոնին. (0,5 միավոր)
1) Յուղի օրհնություն 2) Զրօրհնեք
3) Խաղողի օրհնություն 4) Աղի օրհնություն

2. Քանի՞ գրքից է բաղկացած Նոր Կտակարանը. (0,5 միավոր)
1) 27 2) 25
3) 28 4) 26

3. Հարություն առնելով՝ Հիսուս Քրիստոս քանի՞ օր մնաց երկրի վրա. (0,5 միավոր)
1) 48 2) 38
3) 42 4) 40

4. Զաքարիա Ա. Զագեցի կաթողիկոսը որտե՞ղ է ժողով գումարում 855 թ. (0,5 միավոր)
1) Արտաշատ 2) Շիրակավան
3) Դվին 4) Կարս

5. Ո՞ր կաթողիկոսն է նորոգում Արզինայի կաթողիկոսարանը. (0,5 միավոր)
1) Անանիա Ա. Մոկացի 2) Սարգիս Ա. Սևանցի
3) Զաքարիա Ա. Զագեցի 4) Խաչիկ Ա. Արշարունեցի

6. Ըստ ավանդության՝ ի՞նչ անուն է տվել Ս. Գրիգոր Լուսավորիչը Ս. Տրդատ արքային. (0,5 միավոր)
1) Հուսիկ 2) Արիստակես
3) Հովհաննես 4) Սահակ

7. Ո՞վ է դառնում իսրայելացիների առաջին թագավորը Եգիպտոսի գերությունից ազատագրվելուց հետո. (0,5 միավոր)
1) Սողոմոնը 2) Դավիթը
3) Հեսուն 4) Սավուղը

8. Ի՞նչ է նշանակում Հովհաննես անունը. (0,5 միավոր)
1) Արդարություն 2) Աստծո շնորհ
3) Աստծո փրկություն 4) Մխիթարություն

N 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. _____ում են աթոռակալել Հովհաննես Դրասխանակերտցուն հաջորդած երեք կաթողիկոսները: **(1 միավոր)**

10. Հիսուս պահանջում էր լինել ազնիվ և սուտ չխոսել: Նա արգելում էր նաև խոսքը հաստատելու համար _____ : **(1 միավոր)**

11. _____ տոնին մեծ ու փոքր, տղամարդ ու կին կժերով, սափորներով և դույլերով իրար վրա ջուր են լցնում: **(1 միավոր)**

12. Ներսես կաթողիկոսը մահացել է 373 թ. և թաղվել Լուսավորչի տան տոհմական դամբարանում, որը գտնվում էր _____ ավանում: **(1 միավոր)**

N 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Տարեթիվը համապատասխանեցնել ժողովի անվանը. **(1միավոր)**

1. 354 թ.	ա. Դվինի առաջին ժողով	1	
2. 554 թ.	բ. Արտաշատի ժողով	2	
3. 449 թ.	գ. Շահապիվանի ժողով	3	
4. 444 թ.	դ. Աշտիշատի ժողով	4	
	ե. Դվինի երկրորդ ժողով		

14. Հայրապետների անունները համապատասխանեցնել իրենց գահակալման տարեթվերին. **(1 միավոր)**

1. Ս. Ներսես Մեծ	ա. 353-373 թթ.	1	
2. Անանիա Ա. Մոկացի	բ. 877-897 թթ.	2	
3. Գևորգ Բ. Գառնեցի	գ. 973-992 թթ.	3	
4. Խաչիկ Ա. Արշարունի	դ. 946-968 թթ.	4	
	ե. 898-929 թթ.		

N 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Իրադարձությունները դասավորել ըստ հաջորդականության: (1 միավոր)

ա. Շահապիվանի ժողովը	1	
բ. Վահան Մամիկոնյանի երկրի մարզպան դառնալը	2	
գ. Հայոց արքունիքի մկրտությունը	3	
դ. Ձիրավի ճակատամարտը	4	
ե. Ս. Սահակ Պարթևի ազատումն աքսորից	5	

16. Տոները դասավորել ըստ տոնման հաջորդականության. (1 միավոր)

ա. Խաչվերաց	1	
բ. Պայծառակերպություն - Վարդավառ	2	
գ. Ս. Մարիամ Աստվածածնի վերափոխում	3	
դ. Ս. Հարություն	4	
ե. Ս. Վարդանանց	5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. Կարդալ և պատասխանել հարցերին:

«Այս ժամանակ ծաղկելով պայծառացան Հայաստան աշխարհի կրոնավորական կարգերը, և բազում տեղերում կառուցվեցին եղբայրանոցներ, ուր Քրիստոսի սիրով հավաքվեցին մենակյացները:

Առաջինը Կամրջաձորի մեծահռչակ ուխտն էր Արշարունյաց գավառում…: Իսկ Շիրակ գավառում Հոռոմոսի կոչված վանքը շինվեց Հովհաննեսի ձեռքով…: Այս ժամանակ կառուցվեց Նարեկ (վանքը) Ռշտունյաց գավառում, նույն կարգերով՝ Հնձուց վանքը՝ Կարին գավառում, Դպրեվանքը՝ Շիրակում, Ցախաց քարը՝ Վայոց ձոր գավառում»:

1) Ո՞ւմ գրչին են պատկանում այս տողերը: (1 միավոր)

_____

2) Ո՞ր կաթողիկոսի ժամանակաշրջանի մասին է: (1 միավոր)

_____

N 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ: **(2 միավոր)**

1) Խաչիկ Ա.-ն հանդես է գալիս որպես խորագետ, ձեռներեց ու հեռատես գործիչ՝ մեծապես բարձրացնելով կաթողիկոսության վարկը թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում:
2) X դարի երկրորդ կեսին երկիրն ապրում էր պատերազմական և ո՛չ խաղաղ կյանքով:
3) 1022 թ. հունվարի 8-ին՝ Աստվածահայտնության տոնի օրը, Պետրոս կաթողիկոսը Կ. Պոլսում Վասիլ III կայսեր ներկայութեամբ կատարում է ջրօրհնեք:
4) Ս. Գրիգոր Նարեկացին Հայոց Եկեղեցու կողմից դասվել է Ս. Թարգմանիչների շարքում՝ իբրև հայոց մեծագույն սրբերից մեկը:
5) 1001 թ. Գագիկի և Տաշիր-Զորագետի թագավոր Սարգիս Բագրատունու (Անհողին) ռազմական բախումը կանխվում է կաթողիկոսի միջնորդությամբ, և Սարգիսը հնազանդություն է հայտնում:

19. Թվարկվածներից ո՞ր երկուսը Հայոց Եկեղեցու յոթ խորհուրդներից չեն. (2 միավոր)

1) Ս. Հաղորդություն
2) Տնօրհնեք
3) Ս. Մկրտություն
4) Ձեռնադրություն
5) Տրնդեզ

20. Շարադրանք **(2 միավոր)**

Ներկայացուցե՛ք Ս. Հաղորդության խորհրդի իմաստը և խորհրդի հաստատումը: